«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Համագործակցային աշխատանքը որպես ուսուցման կազմակերպման արդյունավետ եղանակ

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Աստղիկ Դանիելյան

Ուսումնական հաստատություն՝ Թաթուլի Թ. Կրպեյանի անվան միջնակարգ

Թալին 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՂԱՆԱԿ.....5
1.1 Համագործակցային ուսուցման տեսական հիմքերը.....6
1.2 Համագործակցային ուսուցման մեթոդներն ու տարրերը.....7
1.3. Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման կազմակերպման մեջ.....14
ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....17
2.1 Տարրական դասարանում համագործակցային աշխատանքի իրականացման վերաբերյալ հարցման արդյունքների ուսումնասիրումն ու վերլուծումը.....17
2.2 Համագործակցային աշխատանքի կիրառման նկարագրումն ու արդյունքների ամփոփումը.....23
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....28
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր հանրակրթական դպրոցի և ուսուցչի առջև ծառացել են բազմազան խնդիրներ: Այս համատեքստում առավել կարևորվում է ուսումնական առարկայի պատշաճ դասավանդումը՝ յուրաքանչյուր դպրոց հաճախող աշակերտի կարողությունների ու հմտությունների զարգացման և բանիմաց ու բարեկիրթ անձ ձևավորելու առումով: Ժամանակակից ուսուցիչը պետք է որդեգրի կառուցողական մոտեցումներ և կիրառի դասավանդման նորարարական մեթոդներ: Անվիճելի իրողություն է, որ ցանկացած առարկայի ուսումնական գործընթաց պետք է իրականացվի առարկայի չափորոշչի պահանջներին և ծրագրային խնդիրներին համապատասխան:

Հետազոտության **հարցն** է՝ «Արդյո՞ք համագործակցային աշխատանքը հանդիսանում է ուսուցման կազմակերպման արդյունավետ եղանակ»:

Սույն թեման համարվում է **արդիական**, քանզի բացի գիտելիքից դպրոցը սովորողին պետք է տա դրանք կիրառելու կարողություն և հմտություն՝ ստեղծագործական միտք ձևավորի, ուղղորդի նրա ներքին հնարավորությունները, հիմվելով այն գաղափարի վրա, որ ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է սովորողի ձեռք բերած կարողություններով՝ շեշտադրելով արդյունքը, թե նա ինչ կարող է անել, իսկ այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսումնառության ընթացքում կիրառվում են ուսուցման կազմակերպման արդյունավետ եղանակներ, որոնցից ամենատարածված և ամենագործունը հանդիսանում է խմբային ուսումնահետազոտական աշխատանքը: Դրա ճիշտ և արդյունավետ կազմակերպման դեպքում անհատը ձևավորում և զարգացնում է իր գիտելիքները՝ ակտիվորեն մասնակցելով ճանաչողական գործընթացին:

Կառուցողական մանկավարժության համար անհրաժեշտ են ուսման հատուկ պայմաններ, որոնք հնարավորություն կտան աշակերտներին համագործակցելու և օգնություն ցուցաբերելու միմյանց տարաբնույթ նախագծերի շրջանակներում: Նրանք կարող են օգտվել մի շարք գործիքներից և տեղեկատվության աղբյուրներից՝ իրենց խնդիրները լուծելու և նպատակին հասնելու համար: Դասավանդման այս եղանակը կարող է իսկապես արդյունավետ լինել, եթե ուսուցիչը հետամուտ լինի ուսման բազմամակարդակ գործընթացին և կարողանա այն իրագործել:

Հետազոտության **նպատակն** է ուսումնասիրել, վեր հանել տարրական դպրոցականների համագործակցային աշխատանքի աջակցման և կառավարման առանձնահատկությունները և փորձարկել դրանք կիրառության մեջ:

Հետազոտության **խնդիրներն** են՝

1. ուսումնասիրել տարրական դպրոցականների համագործակցային աշխատանքների իրականացման առանձնահատկությունները,
2. ներկայացնել ուսուցչի դերը խմբային աշխատանքների իրականացման աջակցման և կառավարման գործում,
3. դիտարկել տարրական դպրոցում իրականացվող համագործակցային աշխատանքների ձևերը,
4. ուսումնասիրել ուսուցիչների կողմից իրականացվող աջակցման և կառավարման մեթոդները,
5. իրականացնել փորձարարական համագործակցային աշխատանք տարրական դպրոցում:

Աշխատանքի իրականացման համար կիրառվել են հետազոտական հետևյալ մեթոդները.

- մասնագիտական գրականության ուսումնասիրությունը,
- դիտումը,
- հետազոտական հարցումը,
- զրույցը,
- համեմատական վերլուծությունը,
- գիտափորձը:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՂԱՆԱԿ

Աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացման խնդիրն այժմ դարձել է մեր դպրոցի ամենավճռական ու ամենաառաջնահերթ հարցերից մեկը, որին պետք է առանձահատուկ ուշադրություն դարձնել: Աշակերտների մեջ չի կարելի ստեղծագործական միտք զարգացնել, եթե ուսման տարիների ընթացքում նրանք սահմանափակվել են գլխավորապես վերարտադրողական, կատարողական գործունեության պայմաններում և բոլոր գիտելիքները մատուցվել են պատրաստի վիճակում:

Ժամանակակից հոգեբանությունը և դիդակտիկան բացահայտել են խնդիրների մեծ դերը ուսուցման մեջ, որպես աշակերտների մտավոր լարման, ճանաչողական, գործնական ակտիվության բարձրացման, հետաքրքրության ուժեղացման կարևորագույն գործոններից մեկը:

«Խնդիրների լուծումը աշակերտներից միշտ պահանջում է յուրացրածի ոչ թե պարզ վերարտադրություն այնպիսի ձևով, ինչպես այն օգտագործվել է նախորդ փորձի ժամանակ, այլ նրա բովանդակության, կամ գործունեության եղանակի այս կամ այն փոփոխության միջոցով» [9]:

Համագործակցությունն ուսուցման գործընթացը դարձնում է առավել գրավիչ և հետաքրքիր բոլոր սովորողների համար՝ ապահովելով մասնակցության հնարավորություններ: Այն թույլ է տալիս ուսուցչին լուծելու ավանդական մեթոդներով իրականացվող կամ, գրեթե անհնար թվացող, բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Դասարանը դառնում է ընդհանուր նպատակներ ունեցող փոքր խմբերի թիվ, ուր հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից:

Համագործակցային ուսուցումն ուսուցչին առաջադրում է որակապես նոր խնդիրներ՝ կապված ուսուցման նպատակների հետ, այսօր գիտելիքի մատուցմանն ու վերարտադրմանը փոխարինելու են գալիս ուսուցման գործընթացի կառավարման և սովորողների համագործակցային հմտությունների ձևավորման նոր մոտեցումներ:

Խմբային աշխատանքի կազմակերպման եղանակները մշտապես կախված են՝

- առարկայի բովանդակությունից
- կրթությանը ներկայացվող պահանջներից ու դասավանդման եղանակներից
- աշակերտների անհատական կարիքներից։ [10]

Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է աշակերտների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա։

1.1 Համագործակցային ուսուցման տեսական հիմքերը

Համագործակցային ուսուցումը իր կիրառությունն է գտել դպրոցում դեռևս 1970-ական թվականներին և այսօր այն համարվում է ուսումնական մեթոդաբանության ամենաուսումնասիրված տեսակներից մեկը։

Ս. Վարդումյանը նշում է, որ համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս։ [Վարդումյան 2005: 175]

«Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»։ [Խաչատրյան 2003: 18]

Առնվազն երեք հիմնական տեսություններ են ընկած համագործակցային ուսուցման հիմքում՝ սոցիալական փոխկախվածությունը, ճանաչողական զարգացումը և վարքագծային ուսումնառությունը։

<u>Սոցիալական փոխկախվածության</u> գաղափարի հիմքում ընկած են խմբային զարգացման ուղղությամբ Կուրտ Կաֆկայի և Կուրտ Լեվինի կատարած հետազոտությունները։ 20-րդ դարի 30-ական թվականներին նրանք առաջարկեցին խումբը դիտարկել որպես մի դինամիկ ամբողջություն, որտեղ կարևորվեց ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը։ Ըստ Լևինի հենց այդ փոխկախվածությունն է տանում դեպի «դինամիկ ամբողջության», քանի որ խմբի անդամներից որևէ մեկի իրավիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների իրավիճակի փոփոխության։

Իսկ այդ ներխմբային լարվածությունը տանում է դեպի խմբային ընդհանուր նպատակի իրականացմանը: [Lewin 1935: 128]

Ճանաչողական զարգացման. 1960-ական թվականներին Ջերոմ Բրունների կողմից մշակված հետազոտական ուսուցման գաղափարը շրջադարձային եղավ: Նրա կարծիքով ուսումնառությունն ակտիվ հասարակական գործընթաց է, որի ժամանակ սովորողները նոր մտքեր կամ գաղափարներ են կառուցում՝ հիմնվելով իրենց ներկա և անցյալ գիտելիքների վրա: Սովորողն ընտրում և վերափոխում է տեղեկությունները, վարկածներ է կառուցում և որոշումներ ընդունում՝ հիմնվելով ճանաչողական կառույցների վրա: Այսպիսով, Բրունները տեսականորեն բացահայտում է, որ ուսուցումը կախված է նյութի կառուցվածքից, դասակարգումից և ըմբռնման աստիճանից: Նա տալիս է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկատվությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և դառնում գիտելիք՝ հիմնվելով ոչ թե «ինչ» սովորելու, այլ «ինչպես» սովորելու վրա:

Վարքագծային ուսուցման տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային ամրացումները և արդյունքների խրախուսումը, որոնք հանդիսանում են ուսուցման շարժառիթներ: 1960-ական թվականներին Ֆրեդերիկ Սքիները զարգացրեց ծրագրավորված ուսուցման և վարքագծային ձևափոխումների գաղափարները: Նա կարևորում էր խրախուսանքը, որպես ուսուցման հիմնարար սկզբունք: Սքիները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական ամբողջություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Պատասխանելով մի շարք համեմատաբար պարզ հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և ամբողջը յուրացնելու խթան:

Ներկայումս ուսուցման համագործակցային մեթոդները լայնորեն ներդրվում են Եվրոպական զարգացած՝ հատկապես սկանդինավյան երկրներում և Միացյալ Նահանգներում: [Հովհաննիսյան 2006: 10-13]

1.2 Համագործակցային ուսուցման մեթոդներն ու տարրերը

Համագործակցային ուսուցումը որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և

ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարանում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը (համագործակցային ուսուցման մեթոդներց շատերը սովորողների անհատական առանձնահատ-կությունները հաշվի առնելը դիտարկում են որպես ուսուցման արդյունավետությունը խթանելու միջոց),
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ:

Խճանկար (Ջիգսա,Jigsaw)

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի ասպեկտի, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին:

Խճանկարը աշակերտների թիմային առաջադիմության մեթոդից տարբերվում է նրանով, որ աշակերտները խորամուխ են լինում նյութի որոշակի ասպեկտի մեջ:

Խճանկար մեթոդի կիրառման փուլերը.

Փուլը	*Նկարագրությունը*
Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում	Աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի «փորձագետ»: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում են տեղեկատվություն:
Աշխատանք փորձագիտական խմբում	Փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում են և հարստացնում իրենց նյութերը:

Աշխատանք ուսումնական խմբում	Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:
Ավարտական աշխատանք	Աշակերտները անհատական ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից:
Ամփոփում	Արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Շրջագայություն պատկերասրահում

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

1. Ուսուցիչն ուսումնական նյութը կամ առաջադրանքը բաժանում է 4-6 մասի և յուրաքանչյուր խմբին տալիս դրանցից մեկը՝ ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այդ դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ:

2. Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են տրված մասի վրա և ստեղծում՝ նկար, կոլաժ, աղյուսակ և այլն:

3. Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին՝ ստեղծելով «պատկերասրահ»:

4. Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը և կազմում չորս նոր խումբ՝ ըստ իրենց համարների:

5. Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին:

6. Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը համարվում է առավել հեշտ մեթոդներից մեկը և օգտակար է այն ուսուցիչների համար, որոնք նոր են սկսում կիրառել համագործակցային ուսուցման մեթոդները: Այս մեթոդը խթանում է համագործակցությունը և մասնակցությունը: Կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ:

Նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանեք 4-5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբում ընդգրկեք տարբեր առաջադիմությամբ աշակերտների: Հնարավորության դեպքում խմբերում ապահովեք տղա-աղջիկ հավասարությունը:

Խմբերին տվեք նոր թեմային առնչվող հանձնարարություն: Նշեք, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացնում է նյութը: Ապա ստուգեք նյութի յուրացման աստիճանը: Այս ընթացքում թիմի անդամներն այլևս չեն կարող օգնել միմյանց: Առաջադրանքի գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականով ներդրում է ունենում խմբի ընդհանուր ցուցանիշում:

Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տալիս գնահատելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին:

Խմբային հետազոտության մեթոդ

Խմբային հետազոտության մեթոդի կիրառման ընթացքում աշակերտները խմբով աշխատում են կոնկրետ խնդրի վրա: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների, Խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է:

Կիրառելով խմբային հետազոտության մեթոդը, ուսուցիչը կարող է հետապնդել 3 փոխկապակցված նպատակ.

1. Խմբային հետազոտությունը աշակերտներին սովորեցնում է համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրները
2. Աշակերտները խորությամբ են յուրացնում նյութի բովանդակությունը:
3. Աշակերտները համագործակցում են խնդիրը հետազոտելու ընթացքում:

Այսպիսով՝ աշակերտները յուրացնում են բովանդակությունը, զարգացնում են հետազոտելու և համագործակցային աշխատանքի հմտություններ:

Խմբային հետազոտության գնահատումը պետք է ներառի այս մեթոդի 3 նպատակները. հետազոտության հմտություններ, խմբային աշխատանքի (համագործակցային) հմտություններ, բովանդակություն: Այս մեթոդի հիմնական նպատակներից մեկը հետազոտության գործընթացի գնահատումն է: Կարևոր է, որ աշակերտները գնահատեն հետազոտության նպատակը, ընթացքը և արդյունքը: [Հովհաննիսյան 2006: 78-82]

Մանկավարժական նախագիծ

Բարդ, հիմնականում առօրյա կյանքին առնչվող խնդիր, խնդիրն ուսումնասիրելուն վերաբերող նպատակների և առաջադրանքների սահմանում, աշխատանքային գործընթացի կազմակերպում և արդյունքների կանխատեսում, արդյունքների ներկայացում:

Մանկավարժական նախագծային մեթոդն ուսման հատուկ եղանակ է, որը կենտրոնանում է որևէ խնդրի շուրջ:

Այս մեթոդի աշխատանքների իրականացման համագործակցային բնույթն ապահովվում է նրանով, որ ուսուցչի ղեկավարման դերն աննշան է, նա գործում է գրեթե աննկատ, իսկ համագործակցությունն իրականացվում է միայն համատեղ պլանավորման, գործողությունների և գնահատման միջոցով:

Նախագծային մեթոդը պահանջում է աշակերտների աշխատանքի գիտակցված ծրագրում: Ծրագրումը կատարվում է երկու տարբեր մակարդակներով: Առաջին մակարդակը վերաբերում է ամբողջ գործընթացին, որի ընթացքում նախատեսվում է, որ աշակերտին կներկայացվեն որոշակի գիտելիքներ և կզարգացվեն որոշակի կարողություններ: Երկրորդ մակարդակը ենթադրում է անհատական նախագծերի

ծրագրում, որի համար անհրաժեշտ է ուսուցչի կողմից շահագրգռվածություն և օժանդակության ցուցաբերում: [Silberman 1996: 53-54]

Երեք բանալի և մեկ կողպեք

«Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդը հիմնականում կիրառվում է նյութի ամփոփման փուլում: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով:

Մեթոդի էությունը հետևյալն է. ուսուցչի կողմից առաջադրված ելակետային հարցադրման պատասխանը գտնելու համար տրվում են տվյալ գրական երկի բովանդակությունից բխող բնորոշումներ, ուղղորդող, հուշող, տվյալ հարցը ինչ-որ չափով ամբողջացնող բնութագրումներ, որոնք այն բանալիներն են, որոնց օգնությամբ պետք է բացվի կողպեքը՝ հիմնական հարցադրումը: «Երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդը ցածր դասարաններում կարելի է կիրառել հետևյալ կերպ. որևէ ստեղծագործություն, բանաստեղծություն, հեքիաթ ուսուցանելուց հետո ուսուցիչը կարող է մեթոդի օգնությամբ ստուգել, թե որքանով են աշակերտները նյութը յուրացրել, որքանով են հիշում անցած ստեղծագործությունը:

Օրինակ՝ բնագրի ընթերցումը ստուգելու համար կարելի է կազմել հետևյալ բանալի բառերն ու բառակապակցությունները.

- Կողպեք («Շունն ու կատուն») – բանալիներ (գդակ, գառան մորթի, ցրցամ տալ):
- Կողպեք («Չարի վերջը») – բանալիներ (մի սար, մի ծառ, կկու, աղվես):
- Կողպեք («Մի կաթիլ մեղրը») – բանալիներ (խանութպան, ասլան շուն, կատու): [8]

Վերոնշյալ մեթոդներից ամենաուսումնասիրված և ամենակիրառելին են՝ խմբային նախագծային և խճանկար մեթոդները, և նրանց շատ քիչ են զիջում աշակերտների թիմային առաջադիմություն, շրջագայություն պատկերասրահում և խմբային հետազոտություն մեթոդները:

Համագործակցային ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր, որոնց անվանում են համագործակցային ուսուցման տարրեր: Լավ և վատ կառուցված դասերը տարբերվում են հենց այդ տարրերի առկայությամբ կամ բացակայությամբ: Ավելին, հենց այդ տարրերն են, որ պետք է ապահովեն

համագործակցային ուսուցումը դասի բոլոր փուլերում: Համագործակցային ուսուցման տարրերն ըստ Ջոնսոնների հիմնականում հինգն են: [Jonson 1998: 7]

1. Դրական փոխկախվածություն. համագործակցային ուսուցման ապահովման կարևոր պայմաններից մեկը խմբի անդամների միջև դրական՝ աջակցող փոխկախվածության ապահովումն է: Ինչպես նշում է Մ. Սիլբերմանը, դրական փոխկախվածությունը նշանակում է, որ խումբը ունի հստակ հանձնարարություն, այսպիսով բոլորը գիտեն, որ նրանք կամ միասին «լողում» են կամ միասին «սուզվում»:

Եթե որևէ մեկին հանձնարարված անհատական ուսումնահետազոտական աշխատանքը լավ է ստացվում, ապա շահում է ոչ միայն նա, այն ամբողջ խումբը: Դրական փոխկածությանը էությունը կայանում է նրանում, որ այն նպաստում և՛ անձնական առաջընթացին, ինչին նպաստում են աշակերտի կողմից ուսումնահետազոտական աշխատանքի մանրակրկիտ իրականացումը և ստացված արդյունքները խմբի այլ անդամների անհատական աշխատանքների հետ համեմատության ենթարկումը, և՛ խմբի յուրաքանչյուր անդամի հաջողությանը: [11]

2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. խմբերում դրական փոխկախվածություն ստեղծելուց հետո անհրաժեշտ է կենտրոնանալ աշակերտների կոմից միմյանց խրախուսելու և ունեցած ռեսուրսները միմյանց հետ կիսելու վրա: Աշակերտները օգնում, աջակցում, քաջալերում և գովաբանում են միմյանց՝ ուսանելուն նպատակաուղղված ջանքերը: [12]

Այս դեպքում խմբի անդամները աշխատում են դեմ-դիմաց նստած և ոչ թե շարքերով, որը կապահովի խմբի անդամների արդյունավետ հաղորդակցումը և նրանց առավելագույն մասնակցությունը խմբային քննարկումներին: Կարելի է ասել, որ այս տարրը հիմնականում ունի տեխնիկական բնույթ և այն ապահովելու համար խմբի անդամները պետք է նստեն դեմ-դիմաց և հաղորդակցվելիս տեսնեն միմյանց: Հաճախ այն անվանում են «համագործակցային» կամ «միասին սովորելու» դիրք:

3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. համագործակցային ուսուցման խմբերում չկան «գլուխ պահողներ»: Ուսուցիչները պետք է համագործակցային ուսուցումն կազմակերպեն այնպես, որպեսզի խմբի յուրաքանչյուր անհատ ինչ-որ ձևով պատասխանատու լինի իր կատարած

աշխատանքի համար: Հաճախ տալիս են միջինացված գնահատականներ կամ բոլորին միևնույն գնահատականը՝ հիմնվելով վերջնական արդյունքի վրա: Այնուամենայնիվ, դրանք պետք է օգտագործվեն ծայրահեղ զգուշությամբ և միայն հազվադեպ դեպքերում: [Brown & Lara 2011: 88-91]

4. Սոցիալական հմտություններ. Խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտներն անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ: Հաճախ այդ հմտություններին չտիրապետելու պատճառով խմբային աշխատանքը ձախողվում է:

Միմյանց լսելու, առաջացած թյուրըմբռնումներն ու կոնֆլիկտները լուծելու, միմյանց խրախուսելու, համատեղ աշխատանքը պլանավորելու և իրականացնելու վարժությունների օգտագործումը նպաստում է սովորողների մոտ համապատասխան հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Եթե սովորողները առաջին անգամ են աշխատում խմբերով, ապա ուսուցչի համար գերխնդիր է դառնում նրանց սովորեցնել համագործակցելու հմտություններ:

Խմբային գործընթաց/մշակում. Խմբային գործընթացը (group processing), որպես համագործակցային ուսուցման տարր, խմբի անդամների կողմից իրենց խմբի հաջողությունների և արդյունավետ փոխհարաբերությունների, խմբային համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլն է:

Խմբի անդամները պետք ազատ զգան իրենց, ներկայացնելու համար իրենց անհանգստացնող կետերը, ինչպես նաև ի սրտե տոնելու իրենց նվաճումները:[11]

Խմբերը նկարագրում են խմբի անդամների օգտակար և ոչ օգտակար գործողությունները և որոշումներ կայացնում, թե որ վարքագիծը կամ գործողությունները պետք բարելավել, կամ զարգացնել:

1.3. Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման կազմակերպման մեջ

Ժամանակակից կրթական աշխարհում գնալով մեծանում է սովորողների ինքնուրույն ուսումնառության դերը: Աշակերտների մոտ զարգանում են այնպիսի հմտություններ, որոնք օգնում են նրանց կիրառելու տարբեր ռազմավարություններ, կարծիք ձևավորելու համար օգտագործել սեփական գաղափարները: Սակայն այս գործընթացում ուսուցիչները ունեն կարևոր դեր:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիայի կիրառումը կարելի է պայմանականորեն բաժանել 3 հիմնականան փուլերի՝

1. ուսումնական նյութի նախապատրաստում,
2. աշակերտների նախապատրաստում համատեղ աշխատանքին,
3. բուն ուսումնական աշխատանքի ընթացքը։

Ուսումնական նյութի նախապատրաստման փուլում իրականացվում է՝

- ուսումնական նյութի ընտրություն, դրա բաժանում տրամաբանական հատվածների,
- լրացուցիչ նյութի ընտրություն,
- թիմային աշխատանքի տեսակի ընտրություն։

Աշակերտներին համատեղ աշխատանքի նախապատրաստման փուլում տեղի է ունենում՝

- ուրիշին լսելու, ուրիշի տեսակետի մասին կարծիք արտահայտելու կարողությունների ձևավորում,
- սեփական կարծիքն արտահայտելու և այն հիմնավորելու կարողությունների ձևավորում,
- անհրաժեշտ տեղեկատվություն հայթհայթելու կարողությունների ձևավորում,
- մտապատկերը խոսքի միջոցով արտահայտելու և բանավոր խոսքը մտապատկեր դարձնելու կարողությունների ձևավորում,
- վերլուծություն և համադրություն կատարելու կարողությունների ձևավորում,
- եզրահանգումներ կատարելու կարողությունների ձևավորում և այլն։

Բուն ուսումնական աշխատանքի կատարման փուլում կարող է կազմակերպվել՝

1. փոխադարձ ուսուցում ուսուցիչ-աշակերտ դերային խաղի տեսքով,
2. զույգերով մտքերի փոխանակման, լրացուցիչ տեղկատվության որոնման տեսքով
3. փոքր և մեծ խմբերով յուրացման, որոնողական աշխատանք կազմակերպելու միջոցով [10]

Համեմատենք ուսուցչի գործառույթները ավանդական՝ ղեկավարի և նոր՝ աջակցող-դիտարկողի դերերում.

ղեկավարի դեր	աջակցող-դիտարկողի դեր
դասախոսում է և ասում է, թե ինչպես կատարեն առաջադրանքը կարգապահություն է սահմանում անընդհատ սովորողներին վերադարձնում է դեպի առաջադրանքը աշխատում է մեկ խմբի հետ հաճախ կազմակերպում է անգիր ուսուցում կամ մեխանիկական կրկնություն	հարցերի միջոցով կողմնորոշում է խմբին քաջալերում է խմբին՝ լուծելու սեփական խնդիրները ընդարձակում և խորացնում է սովորողների հետաքրքրությունները լուծում է կոնֆլիկտները քաջալերում է մտածողությունը դիտարկում է սովորողներին ապահովում է հետադարձ կապ

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցչին Էլիզաբետ Կոհենը առաջարկում է որդեգրել աջակցող-դիտարկողի դերը՝ ի տարբերություն ավանդական ղեկավարի դերի։

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մատուցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը: Ժամանակի բաշխումը հատկապես կարևոր է համագործակցային ուսուցման արդյունավետությունն ապահովելու գործում։ [Հովհաննիսյան 2006: 40-42]

Այս բոլորը հաստատում են, որ ուսուցիչը կարևոր դեր ունի համագործակցային ուսուցման կազմակերպման գործընթացում. ձևավորում է սովորողների խմբերը, պլանավորում առաջադրանքները, սահմանում է առաջադրանքների կատարման պայմանները և ժամկետները, գնահատման ձևերն ու դրանց կիրառման ուղիները: Այլ խոսքով՝ կազմակերպում է ուսուցումը: Այսպիսի մոտեցումը առաջ է բերում նաև աշակերտի դերի փոփոխություն:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Տարրական դասարանում համագործակցային աշխատանքի իրականացման վերաբերյալ հարցման արդյունքների ուսումնասիրումն ու վերլուծումը

Համագործակցային աշխատանքի աջակցման և կառավարման առանձնահատկություններն ուսումնասիրելու նպատակով մեր կողմից իրականացվել է սոցիոլոգիական հարցում:

Սոցիոլոգիական հարցման ընթացքում կիրառել ենք հարցաթերթիկի մեթոդը, որն իրականացվել է Արագածոտնի մարզի Թաթուլի Թ. Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցի և Երևանի Շենգավիթ վարչական շրջանի N 144 հիմնական տարրական դասարանների աշակերտների և ուսուցիչների հետ (50 աշակերտ, 50 ուսուցիչ): Աշակերտների և ուսուցիչների ընտրությունը կատարվել է պատահականության սկզբունքով:

Իրականացված հետազոտության նպատակն է ուսումնասիրել թե որքանով է կիրառելի համագործակցային աշխատանքը տարրական դասարաններում, և ինչպիսի աջակցման և կառավարման առանձնահատկություններն են ձեռք առնվում:

1-ին փուլով իրականացրել ենք հարցում աշակերտների հետ՝ թվով 50 հոգի: Հարցերը թվով 6-ն էին, որոնցից 1-4-րդը բազմակի ընտրության հարցեր էին, իսկ 5-րդ և 6-րդ հարցերին աշակերտները տվել են իրենց անհատական պատասխանները:

Արդյունքներն են՝

Աղյուսակ 1

ՀԱՐՑ 1 Ի՞նչ ձևաչափով են անցկացվում Ձեր հետազոտական աշխատանքները:	Աշակերտների թիվը	Անհատական	Խմբային
	50	17	33
Ընդամենը	100%	35%	65%

Ինչպես երևում է հարցման արդյունքներից, ուսումնահետազոտական աշխատանքների 35 տոկոսը իրականացվում է անհատական, իսկ 65 տոկոսը՝ խմբային եղանակով:

Աղյուսակ 2

ՀԱՐՑ 2 Հաճա՞խ եք ունենում համագործակցային աշխատանքներ:	Աշակերտների թիվը	Այո	Ոչ	Ոչ այնքան
	50	14	11	25
Ընդամենը	100%	28%	22%	50%

Պատասխանների արդյունքներից պարզ է դառնում, որ գերակշռող թիվ է կազմում ոչ այնքանը՝ 50 տոկոս: Այսինքն, ընդհանուր առմամբ, կարող ենք ենթադրել, որ համագործակցային աշխատանքներ հաճախ չեն կազմակերպվում:

Աղյուսակ 3

ՀԱՐՑ 3 Արդյունավե՞տ է համագործակցային աշխատանքը:	Աշակերտների թիվը	Այո	Ոչ	Մասամբ
	50	25	3	22
Ընդամենը	100%	50%	6%	44%

Ինչպես երևում է արդյունքներից, հարցվողների 50 տոկոսը գտնում է, որ համագործակցային աշխատանքը արդյունավետ է, 44 տոկոսը համարում են, որ այն մասամբ է արդյունավետ, և ընդամենը երեք աշակերտ կարծում են, որ նմանատիպ աշխատանքները արդյունավետ չեն:

Աղյուսակ 4

ՀԱՐՑ 4 Ո՞ր ձևաչափն եք Դուք նախընտրում:	Աշակերտների թիվը	Անհատական	Խմբային
	50	23	27
Ընդամենը	100%	46%	54%

Պատասխանները գրեթե կիսվել են՝ սովորողների 46%-ը նախընտրում է անհատական, իսկ 54%-ը խմբային աշխատանքները: Այնուամենայնիվ խմբային աշխատանքները նախընտրողների քանակը մի փոքր գերազանցում է:

Աղյուսակ 5

ՀԱՐՑ 5 Համագործակցային ուսուցման ի՞նչն է Ձեզ դուր գալիս:	Աշակերտների թիվը	Կարծիքների փոխանակումը, համեմատումը և վերլուծությունը	Միասնական աշխատանքը	Հետաքրքիր նորությունները	Աշխատասիրությունը
	50	30	18	1	1
Ընդամենը	100%	60%	36%	2%	2%

Ինչպես երևում է աղյուսակի արդյունքներից, սովորողների առավել մեծ շրջանակին, նմանատիպ աշխատանքներ իրականացնելիս, ամենաշատը դուր է գալիս միմյանց հետ համագործակցելու, կարծիքների փոխանակման, համեմատման և վերլուծման հնարավորության ընձեռումը, ինչից կարելի է ենթադրել, որ աշակերտները հակված են թիմային աշխատանք կատարելուն:

Աղյուսակ 6

ՀԱՐՑ 6 Ի՞նչը դուր չի գալիս:	Աշակերտների թիվը	Թերություններ չկան	Աղմուկը	Կարծիքների անտեսումը	Մասնակի պասիվությունը՝ արդյունքում ծանրաբեռնվածության ավելացում	Ժամանակի սղությունը
	50	18	10	15	5	2
Ընդամենը	100%	36%	20%	30%	10%	4%

Չնայած այն հանգամանքին, որ սովորողներից շատերը՝ թվով 36%, գտնում են, որ համագործակցային աշխատանքները բացասական կողմեր չունեն, այնուամենայնիվ, ինչպես տեսնում ենք տրամագրի արդյունքներից, առկա են մի

շարք խնդիրներ։ Աշակերտների 30 տոկոսը գտնում է, որ շատ հաճախ իրենց կարծիքները անտեսվում են։ Նմանատիպ խնդրի հետ ավելի շատ բախվում են ավելի թույլ առջադիմություն ունեցող աշակերտները, որոնց ձայնը շատ հաճախ ճնշվում է իրենց համեմատաբար բարձր առաջադիմություն ունեցող դասընկերների կողմից։ Աշակերտների 20 տոկոսը կարծում է, որ աղմուկը անցնում է թույլատրելիի սահմանը, իսկ 10 տոկոսը բողոքում է ավելորդ ծանրաբեռնվածությունից, ինչը ըստ նրանց պայմանավորված է այն հանգամանքով, որ խմբի մասնակիցների մի մասը պասիվություն է ցուցաբերում, ինչի արդյունքում ավելանում է իրենց աշխատանքի չափաբաժինը։ Սովորողների 4 տոկոսը գտնում է, որ հատկացված ժամանակը սուղ է, ինչը ավելի նկատելի է միայն դասարանի շրջանակներում անցկացվող աշխատանքների դեպքում, քանի որ դասաժամը բավականին կարճ է ծավալուն աշխատանքների համար։

Հետազոտության երկրորդ փուլով անց ենք կացրել հարցում ուսուցիչների հետ՝ թվով 50 հոգի։ Հարցերն այս դեպքում 6-ն էին, որոնցից 1-ինը և 2-րդը բազմակի ընտրության հարցեր էին, իսկ մնացած հարցերին ուսուցիչները տվել են իրենց անհատական պատասխանները։ Պատասխաններն, այս դեպքում նույնպես, ամբողջությամբ ընդհանրացված են։

Հարցման արդյունքներն են՝

Աղյուսակ 7

ՀԱՐՑ 1 Ուսուցման ո՞ր ձևաչափն եք նախընտրում	Ուսուցիչների թիվը	Անհատական	Խմբային
	50	25	25
Ընդամենը	100%	50%	50%

Ինպես երևում է աղյուսակ 8-ից, ուսուցիչների պատասխանները բավականին հետաքրքիր կերպով կիսվել են՝ ուղիղ 50%-ը նախընտրում է անհատական, իսկ մյուս 50%-ը՝ խմբային ձևաչափը։

Աղյուսակ 8

ՀԱՐՑ 2 Ինչպե՞ս եք ընտրում համագործակցային աշխատանքի թեման։	Ուսուցիչների թիվը	Հաշվի առնելով աշակերտների նախասիրությունները	Հետևելով ծրագրին	Այլ
	50	32	18	0
Ընդամենը	100%	64%	36%	0%

Ինչպես երևում է արդյունքներից՝ ուսուցիչների մեծամասնությունը՝ 64 տոկոսը, աշխատանքի թեման ընտրելիս հաշվի են առնում աշակերտների նախասիրությունները։ Սա շատ ողջունելի է, քանի որ հաշվի են առնվում սովորողների առանձնահատկությունները և մոտեցումը աշակերտակենտրոն է։

Աղյուսակ 9

ՀԱՐՑ 3 Ի՞նչ աջակցություն եք ցուցաբերում համագործակցային աշխատանք հանձնարարելիս։	Ուսուցիչների թիվը	Լրացուցիչ նյութերի տրամադրում	Անհատական տվյալների հաշվի առնում	Ճիշտ ուղղորդում	Այլ
	50	18	7	20	5
Ընդամենը	100%	36%	14%	40%	10 %

Ինչպես երևում է արդյունքներից, ուսուցիչները աշակերտների աջակցման համար փորձում են նրանց ճիշտ ուղղության վրա դնել՝ ճիշտ հարցադրումներ կատարելով։ Նրանք օգնում են նաև լրացուցիչ նյութերի կամ այդ նյութերի աղբյուրների տրամադրմամբ։ Իսկ խմբերի բաժանելիս փորձում են հաշվի առնել աշակերտների անհատական տվյալները՝ համասեռ խմբեր կազմելու համար։

Աղյուսակ 10

ՀԱՐՑ 4 Վերահսկման ի՞նչ մեթոդներ եք կիրառում։	Ուսուցիչների թիվը	Հավասար պայմանների ապահովում	Ընթացքի հետևում, հարցերի պարզաբանում	Անհատական մոտեցում	Ժամանակի ճիշտ տնօրինում	Այլ
	50	20	9	4	12	5
Ընդամենը	100%	40%	18%	8%	24%	10%

Աղյուսակ 11-ից պարզ է դառնում, որ աշակերտների աշխատանքը վերահսկելիս ուսուցիչները առաջնահերթություն են տալիս հավասար պայմանների ապահովմանը՝ ազատ ունկնդրի կարգավիճակում գտնվող աշակերտներ ունենալուց խուսափելու համար։ Միառժամանակ նրանք փորձում են ճիշտ բաշխել ժամանակը և ավելի արդյունավետ դարձնել աշխատանքը՝ դասապրոցեսի ընթացքին հետևելով և առաջացած հարցերի պարզաբանմամբ։

Աղյուսակ 11

ՀԱՐՑ 5 Որո՞նք են համագործակցային աշխատանքի դրական կողմերը։	Ուսուցիչների թիվը	Համագործակցության սերմանումը	Ինքնաարտահայտման հնարավորությունը	Բոլորի մասնակցության ապահովումը	Հավելյալ նյութերի օգտագործումը	Միասնական արդյունքի ստացումը	Այլ
	50	14	14	8	4	6	4
Ընդամենը	100%	28%	28%	16%	8%	12%	8%

Արդյունքներից երևում է, որ համագործակցային աշխատանքների ունեցած դրական հետևանքները անհերքելի են, որոնցից, ըստ ուսուցիչների պատասխանների, առաջնային են համագործակցության սերմանումը և ինքնաարտահայտման հնարավորության ընձեռումը։ Նմանատիպ աշխատանքների արդյունքում ավելի է հեշտ է ապահովել բոլորի մասնակցությունը, որն, իր հերթին,

հանգեցնում է միասնական, ընդհանուր արդյունքի ստացմանը, ինչը հենվում է ոչ միայն հանձնարարված աղբյուրների, այլև հավելյալ նյութերի ուսումնասիրման և վերլուծման վրա:

Աղյուսակ 12

ՀԱՐՑ 6 Որո՞նք են համագործակցային աշխատանքի բացասական կողմերը:	Ուսուցիչների թիվը	Աղմուկը	Անհատի ինքնադրսևորման կորուստը	Մասնակի պասիվությունը	Ծրագրի թերացումը	Ժամանակի կորուստը	Չկան
	50	6	15	12	6	5	6
Ընդամենը	100%	12%	30%	24%	12%	10%	12%

Ինչպես տեսնում ենք աղյուսակի արդյունքներից, ուսուցիչները նույնպես առանձնացնում են մի շարք բացասական հետևանքներ, որոնց մի մասը համընկնում է աշակերտների կողմից նշված պատասխանների հետ: Որոշ ուսուցիչներ գտնում են, որ խմբային աշխատանքում շատ հաճախ չեն դրսևորվում անհատի կարողությունները, ոմանք ցուցաբերում են պասիվություն, ինչը ոչ միշտ է նկատվում, և միառժամանակ դժվարանում է անհատի աշխատանքի գնահատումը: Մեկ այլ խնդիր է աղմուկի առաջացումը, ինչը շատ հաճախ հանգեցնում է խառնաշփոթի և ժամանակի կորստի: Մի շարք ուսուցիչներ, իրենց հերթին, նմանատիպ աշխատանքների կիրառումը պարզապես համարում են ծրագրից շեղում և ժամանակի ավելորդ կորուստ: Այլ խնդիրներ նույնպես նկատվում են:

2.2 Համագործակցային աշխատանքի կիրառման նկարագրումն ու արդյունքների ամփոփումը

Հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառել ենք համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ 3-րդ դասարանում՝ սեփական փորձի միջոցով

ստուգելու դրանց արդյունավետությունը և պարզելու, թե ինչ մարտահրավերներ են ի հայտ գալիս դրանց օգտագործման ընթացքում։

Ստորև ներկայացված են դրանցից 2-ը և բերված են ստացված արդյունքները։

ԴԱՍ №1

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը

Դասի թեման էր՝ «Միջատներ»։

Դասի նպատակներն էին՝ բարելավել աշակերտների հետազոտելու և առաջադրանքը համագործակցելով կատարելու հմտությունները։

Ուսուցման հիմնական մեթոդներ էր խմբային հետազոտությունը։

Նախապատրաստումը. Աշակերտները նախապես բաժանվել էին 2 տարասեռ և տարամակարդակ խմբերի։ Խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվել էր հետազոտել և տեղեկատվություն հավաքել որևէ միջատի վերաբերյալ, ապա այդ միջատի շուրջ պատրաստել փոքրիկ շնորհանդես և բանավոր ներկայացնել այն։

Աշակերտներին աջակցություն էր ցուցաբերվել նյութերի կիրառելիության ստուգման և շնորհանդեսի պատրաստման ընթացքում առաջացած հարցերի պարզաբանման միջոցով։

Դասարանի կահավորումը. աշակերտները նստել էին ըստ խմբերի, բերվել էր համակարգիչ՝ շնորհանդեսների ցուցադրման համար։

Ընթացքը. դասի սկզբում սովորողները ծանոթացան դասի թեմային շնորհանդեսի միջոցով։

Այնուհետև խմբերին տրվեց հինգ րոպե ժամանակ նախապատրաստվելու համար, որից հետո յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր ընտրած տոնը, մյուս խումբը ուշադիր լսում և անհրաժեշտության դեպքում հարցեր էր տալիս։ Արդյունքում, խմբերի ներկայացումները լսելուց հետո, աշակերտները սկսեցին քննարկում իրականացնել՝ համեմատականներ տանելով տոների միջև։

Գնահատումը. աշակերտներին հանձնարարվեց նախ ինքնագնահատել իրենց՝ կարևորելով երկու չափանիշ՝ որքանով յուրացրեցին դասը և ինչ մասնակցություն ունեցան թիմային աշխատանքում։ Նույն չափանիշները պահպանելով նրանք գնահատեցին նաև իրենց խմբակիցների և մյուս խմբի մասնակիցների աշխատանքները։ Ապա ինքնառեֆլեքսիայի միջոցով սովորողների կողմից

վերլուծության ենթարկվեց ամբողջ դասը՝ շատ համառոտակի գրառումներով՝ ամփոփելով դասի արդյունավետությունը:

Դասի ավարտին ռեֆլեքսիայի օգնությամբ փորձեցինք պատասխանել հետևյալ հարցադրումներին.

- Արդյո՞ք հասանք դասի նպատակին,
- Արդյունավետ կիրառվե՞ց արդյոք ուսուցման մեթոդը,
- Բավարարե՞ց հատկացված ժամանակը դասը լիարժեք պարապելու համար:

Դասի վերլուծությունը. աշակերտներն ի սկզբանե այդքան էլ ոգևորված չէին իրենց համար փոքր-ինչ խորթ ձևաչափով աշխատելուն, սակայն նախապատրաստական աշխատանքներ իրականացնելիս և դասի ընթացքում արդեն երևում էր նրանց ոգևորությունը և աշխատելու պատրաստակամությունը: Իրականացված հետազոտության արդյուքնում աշակերտները կարողացել էին տարատեսակ աղբյուրներից դուրս հանել անհրաժեշտ տեղեկատվությունը և պատրաստել բավականին հագեցած և արտահայտիչ շնորհանդես: Նախապատրաստական աշխատանքների իրականացման պրոցեսում և շնորհանդեսի ներկայացման ժամանակ ներգրավված էին խմբերի անխտիր բոլոր անդամները, սակայն, ավելի ցածր առաջադիմությամբ աշակերտները սակավ ակտիվ էին և ավելի փոքր հատված էին ներկայացնում: Քննարկումների ժամանակ նույնպես որոշակի պասիվություն էին ցուցաբերում:

Այնուամենայնիվ, դասը մեծ հաշվով ստացված էր, քանի որ առաջնային նպատակներն իրականացված էին, այն է՝ աշակերտների մեջ համագործակցային հարաբերությունների բարելավումը և ուսումնահետազոտական աշխատանքի իրականացումը:

ԴԱՍ №2

Առարկա՝ Մայրենի

Դասի թեման էր՝ «Ազգային տոներ և ավանդույթներ»:

Դասի նպատակներն էին՝ ուսումնասիրել ազգային տոները, ավանդույթները և մեծացնել անհատական հաշվետվության և պատասխանատվության կարևորության զգացումը:

Ուսուցման հիմնական մեթոդներ էին՝ հետազոտական, թիմային առաջադիմության, վերլուծական:

Նախապատրաստումը. Աշակերտների հետ համաձայնեցման արդյունքում ընտրվել էր բաց դաս-միջոցառման թեման: Աշակերտները բաժանվել էին 2 խմբի, և յուրաքանչյուր խմբում տարբեր ընդունակություններ ունեցող աշակերտներ էին ընդգրկվել: Յուրաքանչյուր խմբին հանձնարարվել էր ուսումնասիրել և ընտրել ազգային տոներից և ավանդույթներից մի քանիսը և նկարների միջոցով ներկայացնել դրանք: Նրանց նախապես տեղեկացվել էր, որ վերջնական արդյունքում խմբի բոլոր մասնակիցները ստանալու են նույն գնահատականը, որը հանդիսանալու էր խմբի բոլոր անդամների առանձին գնահատականների միջինացված արժեքը:

Աշակերտներին աջակցություն էր ցուցաբերվել նյութերի ճշգրտության ստուգման և առաջացած հարցերի պարզաբանման միջոցով:

Դասարանի կահավորումը. աշակերտները նստել էին ըստ խմբերի:

Ընթացքը. դասի սկզբում աշակերտներին ներկայացվեց ավանդույթների և ազգային տոների կարևորությունը յուրաքանչյուր ազգի ինքնության պահպանման գործում: Կիրառվեցին նախախոսակցական հարցեր՝ սովորողներին ակտիվացնելու նպատակով:

Ապա աշակերտները կատարեցին տեքստի ներքո առկա վարժությունները՝ համապատասխան ընթերցանությունը բարելավող ռազմավարությունների միջոցով: Օրինակ՝ լրացում ռազմավարություն, կապակցում ռազմավարություն, հարց ու պատասխան ռազմավարություն:

Այնուհետև խմբերին տրվեց երեք րոպե ժամանակ նախապատրաստվելու համար, որից հետո խմբերից յուրաքանչյուրը ներկայացրեց իրենց բաժին հասած տոները և ավանդույթները, դրանք ավելի պատկերավոր դարձնելու համար ցուցադրելով համապատասխան նկարներ: Դասի ավարտին համընդհանուր քննարկման արդյունքում ընտրվեց մեկական տոն և ավանդույթ՝ ամենահետաքրքիր և ամենազգային անվանակարգերում:

Գնահատումը. իրականացվեց խմբի առանձին աշակերտների աշխատանքների գնահատում, ապա գնահատականների միջինացնում, որի արդյունքում խմբի բոլոր անդամները ստացան նույն գնահատականը: Կիրառվեց ինքնառեֆլեքսիա:

Դասի ավարտին ռեֆլեքսիայի օգնությամբ փորձեցինք պատասխանել հետևյալ հարցադրումներին.

- Արդյո՞ք արդյունավետ էր թիմային առաջադիմության մեթոդի կիրառումը,
- Յուրացրեցի՞ն աշակերտները նախատեսված նյութը։
- Բավարարե՞ց հատկացված ժամանակը դասը լիարժեք պարապելու համար։

Դասի վերլուծությունը. Թիմային առաջադիմության մեթոդը ընտրվել էր ավելի պասիվ աշակերտներին իրականացվելիք աշխատանքներում հնարավորինս շատ ներգրավելու համար, քանի որ վերջինս կիրառելիս օգտագործվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ։

Մեթոդի արդյունավետությունն ակնհայտ էր, քանի որ նկատելիորեն ավելի ակտիվ էին համեմատաբար ցածր առաջադիմությամբ աշակերտները, որոնք փորձում էին հնարավորինս պատվով դուրս գալ իրենց հանձնարարված առաջադրանքների տակից։ Այս ամենն, ինչ խոսք, խոսում էր նրանց անհատական հաշվետվության և պատասխանատվության մասին։

Միակ անհանգստացնող հանգամանքը երբեմն գլուխ բարձրացնող աղմուկն էր, հատկապես քննարկումների ժամանակ, սակայն այն հեշտությամբ հնարավոր էր լինում հանդարտեցնել։

Այսպիսով, մեր կողմից իրականացված համագործակցային աշխատանքների ընթացքում, մեր առջև նույնպես որոշակի խոչընդոտներ ծառացան՝ մասնավորապես աղմուկի և աշակերտների կողմից ցուցաբերված մասնակի պասիվության տեսքով, սակայն հարկ է նշել, որ մեթոդի կրառումն լիովին արդարացված էր, քանզի ուսուցման արդյունավետությունն ակնհայտ էր և այն նպաստեց ստեղծագործական աշխատանքի և համագործակցային միջավայրի բարելավմանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության ընթացքում մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում հանգեցինք այն եզրակացությանը, որ համագործակցային աշխատանքների իրականացման բոլոր փուլերում ակնկալած արդյունքներից գլխավորը աշակերտի կողմից նոր գիտելիքների, կարողությունների և համագործակցային հմտությունների ձեռքբերումը:

Մեր առջև խնդիր ունենալով ծանոթանալ տարրական դասարանում համագործակցային ուսուցման իրականացման առանձնահատկություններին՝ մեր կողմից ուսումնասիրման ենթարկվեցին համագործակցային ուսուցման կազմակերպան տարբեր մեթոդներ: Ընդհանրական վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ամենաուսումնասիրված և ամենակիրառելի մեթոդներն են՝ խմբային հետազոտություն և խճանկար մեթոդները: Վերոնշյալ մեթոդների ճշգրիտ կիրառման արդյունքում ձևավորում է այնպիսի անհատ, ով աչքի է ընկնում.

- ուրիշին լսելու և ուրիշի տեսակետի մասին կարծիք արտահայտելու,
- սեփական կարծիքն արտահայտելու և այն հիմնավորելու կարողություններով:

Քանի որ համագործակցային աշխատանքների իրականացման հաջողությունը հիմնականում պայմանավորված է ուսուցչի աշխատանքի իմաստալից պլանավորմամբ, մեր կողից ուսումնասիրման ենթարկվեց նաև ուսուցչի դերը խմբային աշխատանքների իրականացման աջակցման և կառավարման գործում:

Ամբողջացնելով կարծիքները կարող ենք պնդել, որ նմանատիպ աշխատանքներ իրականացնող ուսուցիչը պետք է հանձն առնի հետևյալ գործառույթների կիրառումը.

- դասերի, վարժությունների պլանավորում և զարգացում,
- սովորողների խմբերի կազմում և տեղաբաշխում,
- սովորողներին առաջադրանքի ներկայացում և բացատրում,
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն,
- սովորողներին օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում,

- գնահատում:

Ըստ հետազոտության գործնական հատվածում իրականացված հարցումների արդյունքների աշակերտների աջակցման համար ուսուցիչները փորձում են նրանց ճիշտ ուղղության վրա դնել՝ ճիշտ հարցադրումներ կատարելով, օգնում են նաև լրացուցիչ նյութերի տրամադրմամբ: Վերահսկման տեսանկյունից ուսուցիչները առաջնահերթություն են տալիս հավասար պայմանների ապահովմանը, որպեսզի չունենան ազատ ունկնդրի կարգավիճակում գտնվող աշակերտներ, միաժամանակ հետևելով դասապրոցեսի ընթացքին և պարզաբանելով առաջացած հարցերը՝ փորձելով ավելի արդյունավետ դարձնել աշխատանքը:

Ամփոփելով հարցումների արդյունքները, կարող ենք պնդել, որ համագործակցային աշխատանքներ ոչ հաճախ են կազմակերպվում դպրոցներում, ուսուցիչների զգալի մասը գերադասում է արդեն իսկ ավանդական դարձած մեթոդները, երբեմն էլ պարզապես չեն կարողանում համատեղել ծրագրով հատկացված թեմաների ուսուցումը համագործակցային մեթոդների կիրառման հետ:

Հետազոտական աշխատանքի և հարցումների ընթացքում պարզ դարձավ, որ աշակերտներին մեծ մասամբ դուր են գալիս խմբային ուսումնահետազոտական աշխատանքները, նրանց զգալի զանգվածը նախընտրում է թիմային աշխատանքը անհատական աշխատանքից:

Այնուամենայնիվ համագործակցային աշխատանքների մեթոդների ոչ պատշաճ կիրառման արդյունքում առաջանում են բացեր, որոնք նկատելի են և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների կողմից, ինչպես օրինակ՝

- Աղմուկի գերակայությունը դասի ընթացքում,
- Թույլ առաջադիմությամբ աշակերտների պասիվությունը,
- Կարծիքների ճնշումն ու անտեսումը՝ հիմնականում բարձր առաջադիմությամբ աշակերտների կողմից,
- Ոչ հավասար դերաբաշխումը և այլն:

Ուստի, համագործակցային աշխատանքը դեռևս կարիք ունի ներդրման ու զարգացման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հովհաննիսյան Ա., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում (ձեռնարկ), Երևան, Անտարես 2006
2. Խաչատրյան Ս. Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախաշավիղ», 1. Երևան, Տիգրան Մեծ 2003
3. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ. 2005
4. Brown, L. & Lara, V. (2011*). Professional Development Module on Collaborative Learning.* Texas: El Paso Community College.
5. Johnson D., Johnson R. (2008). *Social Interdependence Theory and Cooperative Learning: The Teacher's Role. In: Gillies R.M., Ashman A.F., Terwel J. (eds) The Teacher's Role in Implementing Cooperative Learning in the Classroom. Computer-Supported Collaborative Learning, vol 8.* Boston: Springer.
6. Lewin, K. (1935). *A dynamic theory of personality.* New York: McGraw-Hill.
7. Silberman, M. (1996). *Active learning: 101 strategies to teach any subject.* Massachusetts: Allyn & Bacon Publishing.

Էլեկտրոնային աղբյուրներ

8. Արզումանյան Ա. «Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները// http://publications.ysu.am/wp-content/uploads/2021/12/Azaryan_Armenuhi.pdf. 08.08.2023; 23:10
9. Բաբայան Ա. Հետազոտական աշխատանքները՝ Ավագ դպրոցում սովորողի գործունեության ձև// https://dpir.mskh.am/hy/node/439. 27.08.2023; 20:45
10. Սմբատյան Ա. Մանկավարժական տեխնոլոգիաների, ուսուցման մեթոդների ներդրման առանձնահատկությունները // https://www.academia.edu/33197781/ . 28.07.2023; 16:40
11. IT Learning and Development, Penn State University. Five Basic Elements of Cooperative Learning // http://tutorials.istudy.psu.edu/cooperativelearning/cooperativelearning4.html . 04.08.2023; 17:30
12. Robert J. The Essential Elements of Cooperative Learning in the Classroom // http://www.learner.org. 04.08.2023; 17:45